

Գլուխ Դ. «Միջնադարյան երաժշտություն»

Chapter IV: Medieval Music

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒԹՁԱՅՆԻ ՀՆԱԳՈՒՅՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻՑ ՄԵԿԻ ԹՎԱԳՐՈՒՄԸ

Մհեր Նավոյան (Հայաստան)
արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր
ՀՀ Արվեստի վաստակավոր գործիչ
Երևանի պետական կոնսերվատորիա
ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ

Հայկական Ութնայնի հնագույն վավերագրերը հայ իրականության մեջ մի քանիսն են, որ ներկայացնում են հայ հոգևոր երգարվեստի վաղագույն շերտերը: Եթե մի կողմ թողնենք այդ համակարգի նախաքրիստոնեական հիմքերը, ինչպես նաև վաղ քրիստոնեական կիրառության այսօր նշմարելի հետքերը, ապա դրանց շարքում, առաջին հերթին, առանձնանում է ութ կանոն-սաղմոսների շարքը, որոնց կանոնացումը հիշատակվում է Ս. Սահակ Պարթևի անունով: Դրանց կից, ըստ Ութնայնի դասակարգվել են նաև տասը Մարգարեական Օրհնությունները: Այս միավորները միասին մաս են կազմել Գիշերային ժամերգության: Նույն ծիսական դրվագի բաղադրիչներ են նաև Կանոնի չորս քարոզները և դրանց կից աղոթքները, որ դարձյալ հիշատակվում են Ս. Սահակի և իր աշակերտների անունով: Դրանք առանձնապես հիշարժան են, քանի որ Ութնայնի համակարգը ներկայացնում են, այսպես ասած, չորս միավորով: Դա վկայում է Ութնայնի վաղագույն կիրառության մասին: Ձայնային համակարգի նման կարևոր արտահայտություն է նաև Հարության չորս ավետարանական ընթերցվածների համախումբն՝ ըստ Ութնայնի:

Այսպիսով, Ութնայնի վերոհիշյալ կանոնացված միավորների զգալի մասը պահպանվել է Ս. Սահակ Պարթևի և իր աշակերտների անունով, ուրեմն և մատնանշում է V դարը:

«Մովսեսի Քերթովհապարն յաղագս կարգաց եկեղեցւոյ բացայայտութիւնք» խորագրով երկը որպես ձեռագիր պատառիկ պահպանվել է երկու օրինակով: Առաջինը պահպանվել է XI դարում արտագրված ծիսական ընթերցվածների Գրիգորիս Արշարունու (VII-VIII դարեր) մեկնությամբ կից, որ գտնվում է Վենետիկի Մխիթարյան միաբանության Մատենադարանում, 475 համարի

ներքո: Մյուս օրինակը մեզ է հասել XVII դարասկզբի արտագրությամբ և մաս է կազմել Հարություն Քյուրդյանի մասնավոր հավաքածուի: Ամբողջական երկը շրջանառության մեջ է դրվել XX դարի սկզբին երկու տարբեր հրատարակություններով¹:

Գրվածքը մեկնողական բնույթի մի երկ է, որն, ամենայն հավանականությամբ, առավել մեծ աշխատության պահպանված բեկոր է: Բովանդակությունը եկեղեցու կարգավորությունների՝ կարելի է հասկանալ ծիսական կարգավորությունների մասին է: Իր ոչ մեծ ծավալից անկախ, այս գրվածքը հարուստ տեղեկություններ է հաղորդում հայ վաղմիջնադարյան երաժշտական մշակույթի մասին: Այն կարևոր է Ութձայն համակարգի աստվածաշնչյան հայեցակարգի², թվային խորհրդաբանության, Սաղմոսարանի՝ ըստ ութ ձայնեղանակների կիրառման յուրահատուկ ձևի, հիմներգական որոշ միավորների վաղ շրջանի մեկնաբանության և այլնի առումով:

Երկը պայմանականորեն կարելի է բաժանել երկու հատվածի: Առաջինում հեղինակն աստվածաշնչյան հղումներով և քրիստոնեական խորհրդաբանական տարբեր ձևակերպումներով հիմնավորում է Ութձայնի գոյությունն ու գաղափարաբանական նշանակությունը: Այս հատվածի ավարտին ութ ձայների թվային խորհրդանիշը մեկնաբանելու պատրվակով հեղինակն անդրադառնում է Հայ եկեղեցու Գիշերային ժամերգության մաս կազմող, ըստ Ութձայն համակարգի դասավորված ութ կանոն-սաղմոսներին, որ վերևում հիշատակեցինք: Դրանք սաղմոսների ծավալուն շարքեր են, որ ներկայացնում են գրեթե ողջ Սաղմոսարանի ծիսական կիրառությունը՝ Հայ եկեղեցում՝ ըստ ութ ձայնի: Գիշերաժամի այս դրվագին հաջորդում է Առավոտյան ժամերգության մի շարք միավորների մեկնությունը:

Գրվածքը XX դարի ընթացքում ուսումնասիրվել է հայ երաժշտագիտության մեջ և 1972 թ. երաժշտագետ Նիկողոս Թահմիզյանի կողմից վերագրվել է VII-VIII դարերի հեղինակ Մովսես Սյունեցուն: Սակայն երկի վերնագրում

¹ Բնագրի հրատարակությունը տես՝ Մօսլեսի Քերթոզաօրն հայոց վարդապետի եւ իմաստասիրի յաղագս կարգաց եկեղեցոյ բացատրեալ ի շնորհաց հոգոյ սրբոյ, *Հարուկփրի բանք եւ ճառք ի մարտնագրութեանց նախնեաց ի վերայ ժամասացութեանց եւ Ս. Պատարագին Վենետիկ – Ս. Ղազար, 1910, էջ 7-10*: Նաև՝ Երաժշտութեան մասին երկու հատուածներ նախնեաց մատնագրութենէն, *Անտիպո* հանդէս մտածման եւ արուեստի, 1935, յունուար – փետրուար (2. տարի թիւ 1-2), էջ 30-34:

² Տե՛ս **Ա. Արևշատյան, Ձայնեղանակների ուսմունքը միջնադարյան Հայաստանում**, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, էջ 67 – 87:

հիշատակվող Մովսես Քերթոզահայրը հայագիտության մեջ ընդունված կարծիքով Ս. Մովսես Խորենացին է (V դ.):

Այս հակասությունը լուծելու համար բավարար փաստարկներ կան հենց երկի մեջ, որտեղ Հայ եկեղեցու ծեսին և հայ ծիսական-երգային ժողովածուների պատմությանը, առանձին երգային միավորներին և այլ հանգույցներին առնչվող ձևակերպումները թույլ են տալիս բավարար ճշգրտությամբ վերականգնելու այս գրվածքի ստեղծման ժամանակափուլը:

«Յաղագս կարգաց եկեղեցւոյ» մեկնությունն այսօր համարվում է VII դարի (ավելի ստույգ՝ VII-VIII դարերի) հեղինակ Մովսես Սյունեցու երկը, հակառակ այն բանի, որ հիշատակվել է Մովսես Քերթոզահոր, այսինքն՝ Ս. Մովսես Խորենացու անունով: Կարևոր է շեշտել, որ Մովսես Սյունեցին, իր հերթին, նույնացվում է «Մովսես Քերթոզ» անունով ենթադրվող մի հեղինակի հետ, ով Մովսես Սյունեցու ժամանակակիցն է համարվում: Ըստ դիտարկվող տեսակետի՝ հեղինակների անվանաձևերի նմանությունն իբր առիթ է տվել Մովսես Քերթոզի ինչպես այլ, այնպես էլ «Յաղագս կարգաց եկեղեցւոյ մեկնութիւնք» գրվածքը Մովսես Քերթոզահորը վերագրելու համար: Այդուհանդերձ, երկիս հեղինակ են համարել Մովսես Խորենացուն մինչև XX դարասկիզբը դրա մասին հիշատակող գրեթե բոլոր հայագիտական ուսումնասիրությունները:

Այս մեկնության կապակցությամբ Մովսես Քերթոզի-Սյունեցու հեղինակության հարցը սկզբունքորեն առաջին անգամ բարձրացրեց Ն. Թահմիզյանը³, հավանաբար առաջնորդվելով հ. Ք. վրդ. Չրաքյանի մի հոդվածով⁴ և հ. Վ. Հացունու «Պատմութիւն հայոց Աղթամատոյցին»⁵ երկում արտացոլված հայեցակետերով:

«Յաղագս կարգաց եկեղեցւոյ բացատրութիւնք» գրվածքի սկզբում հեղինակը հիշատակում է «Հոգևոր երգարանը»՝ ակնհայտորեն նկատի ունենալով ժամագիրքը կամ Սաղմոսարան-ժամագիրքը, չափնարկվելով անգամ այլ ժողովածուների մասին, որ կարող էին հավակնել «Հոգևոր երգարան» կոչվելու: Խոսքն, առաջին հերթին, կարող էր առնչվել Շարակնոցին կամ, առնվազն, Շարակնոցին ևս: Սակայն, ակնհայտորեն, հեղինակը որևէ կասկած չունի, որ «Հոգևոր երգարան» կարող է կոչվել սոսկ ժամագիրքը: Այսինքն՝ մյուս

³ Ն. Թահմիզյան, Մովսես Սյունեցին և նրա «Յաղագս կարգաց» գրվածքը, *Հրաբեր հասարակական գիտությունների*, N 11 (359), 1972, էջ 85 – 93:

⁴ Տե՛ս, Գրիգորիս Արշարունոյ ըորեպիսկոպոսի մեկնութիւն ընթերցուածոց, Ներածութիւն Հ. Քերոբէ վ. Չրաքեան, Ի Վենետիկ – Ս. Ղազար, 1964:

⁵ Հ. Վ. Հացունի, *Պատմութիւն հայոց Աղթամատոյցին*, Վենետիկ–Ս. Ղազար, 1965:

ծիսական ժողովածուները կա՛մ չկան, կա՛մ երգարան չեն, կա՛մ էլ Մովսես Քերթոզահոր կողմից որպես հոգևոր երգարան չեն ընկալվում: Իհարկե Շարակնոցի դեպքում այն հոգևոր երգարան չհամարելը խիստ դժվար է: Ուստի, մնում է եզրակացնել, որ գրվածքի հեղինակը չի ճանաչում այսպիսի ժողովածու:

Ուրեմն, խնդիրը մեկնաբանելի է, մեկնաբանման արդյունքում էլ առաջ են գալիս փաստարկներ, որ ազդում են աշխատության ժամանակաշրջանը հստակեցնելու և հեղինակին որոշարկելու հարցի վրա:

Ն. Թահմիզյանն, իհարկե, նկատել է «հոգևոր երգարանի» հետ կապված այս հանգամանքը և տվել է հետևյալ բացատրությունը. «Ուշագրավ է, օրինակ, որ գրվածքի ենթախորագրում «Հոգևոր երգարան» ասելով Սյունեցին (իմա՝ հեղինակը, որ Թահմիզյանի համար արդեն Մովսես Սյունեցին է - Մ. Ն.) հասկանում է՝ ութ սաղմոսականոնները, դրանց կից մարգարեական օրհնությունները, ու նաև քարոզները, աղոթքներն ու մի քանի հին համաքրիստոնեական ընդհանրացած երգեր պարունակած ժողովածուն, ինչպես ցույց է տալիս հոդվածի ողջ բովանդակությունը: Այստեղից պարզ է, ուրեմն, որ նա, բացի հայոց Սաղմոսարան - Ժամագրքից, հոգևոր երգերի կանոնացված ուրիշ ժողովածու չի ճանաչում»⁶: Մինչև այստեղ համաձայն ենք, սակայն հավելյալ մեկնաբանությունը բերում է տողատակում. «Այլ կերպ ասած՝ Մովսես Սյունեցին կամ չգիտի Ներսես Իշխանցի կաթողիկոսի պատվերով Բարսեղ Ճոն երաժիշտի վարդապետի կազմած՝ հոգևոր ինքնուրույն («կցուրդ») երգերի «Ճոնընտիր» անվանված ժողովածուն (որի մասին հաղորդում են պատմիչներ Վարդան Արևելցին և Կիրակոս Գանձակեցին) և կամ, որ ավելի հավանական է, «Ճոնընտիրը» կանոնացված ժողովածուի ուժ է ստացել չափազանց դանդաղորեն, երկար ժամանակամիջոցի ընթացքում»⁷:

Բարսեղ Ճոնի կազմած ժողովածուի՝ «Ճոնընտիրի» կանոնացման և, հատկապես, այն շրջանցելու փորձերի մասին առիթ ունեցել ենք խոսելու⁸: Այստեղ ընդունելի չէ VII-VIII դարերի սահմանագծին հայ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականի կողմից (որպիսին Մովսես Սյունեցին էր, եթե խոսում ենք Ն. Թահմիզյանի տեսանկյունից) «Ճոնընտիր» ժողովածուի մասին չիմանալու ենթադրությունը, քանի որ խոսք է գնում կանոնացված ժողովածուի

⁶ Ն. Թահմիզյան, նշվ. աշխ., էջ 89:

⁷ Նույն տեղում, ծանոթ. 21:

⁸ Տե՛ս մեր հոդվածը՝ Բյուզանդական ազդեցության վարկածը՝ հայ հիմնեղության կարգ (կանոն) ժանրի առնչությամբ, Մանրուսում միջազգային երաժշտագիտական փարեզիրը, հատ. Գ, Երևան, «Լիմուշ» հրատ., 2009, էջ 91-92, ծանոթ. 126:

մասին: Ավելին, բացարձակապես անհասկանալի է Ն. Թահմիզյանին առավել հավանական թվացող այն ենթադրությունն էլ, համաձայն որի այդ ժողովածուն «չափազանց դանդաղորեն» է կանոնացված ժողովածուի ուժ ստացել:

Վերոհիշյալ պատմիչների տված տեղեկությամբ կարելի է հասկանալ, որ այդ ժողովածուն կանոնացվել է կա՛մ կաթողիկոսի կոնդակով, կա՛մ եկեղեցական ժողովի հրահանգով: Այսպես թե այնպես, այդ կոնդակը գրվել է, կամ որոշումը կայացվել է սկզբից, ապա այդ հրահանգով Բարսեղ Ճոնը կազմել է ժողովածուն: Այսինքն՝ այս դեպքում կանոնացումը եղել է նախնական բարձր որոշման իրագործումը: Ասենք թե հասկանալի է «դանդաղորեն» եկեղեցական ժողովի որոշում իրագործելն, այս դեպքում՝ հավանաբար, ժողովածուն կազմելը (թեև, ենթադրություն ենք անում կայացած փաստի մասին), ուրեմն կնշանակի, որ Բարսեղ Ճոնը երկար, մինչև VII-VIII դարերի սահմանը կազմում էր իր ժողովածո՞ւն: Անիմաստ հարցադրումն ակնհայտ է: Ուրեմն, ի՞նչ կնշանակի դանդաղորեն կանոնացվել կամ կանոնական ուժ ստանալ. կանոնացնել կամ կանոնացվել դանդաղորեն՝ ինչպե՛ս:

Վերջապես, դիցուք մոռանում, շրջանցում ենք XIII դարի խոշոր պատմիչների հիշատակության մասին կամ համարում ենք անվավեր, ինչի փորձերն արվել են մեզանում⁹, ապա ինչպե՛ս վարվել շարականային այն հսկա զանգվածի հետ, որ կուտակվել էր մինչև Մովսես Սյունեցու օրերը:

Հայ շարականերգության ձևավորման վերաբերյալ ամենաանպաստ և գիտական խնդիրներ հարուցող տեսակետով անգամ դուրս չենք կարող նետել ամբողջ VII դարը, այսինքն՝ Կոմիտաս Աղցեցու, Անանիա Շիրակացու, Սահակ Զորափորեցու շարականները: Էլ չենք խոսում դեռևս V դարից ժառանգած հիմներգական հարստության մասին: Այս առթիվ տեղին է բերել Բարսեղ Ճոնի կազմած ժողովածուի վերաբերյալ Նորայր արք. Պողարյանի դիտարկումը. «Եօթներորդ դարի կեսուն գոյութիւն ունէին, ըստ աւանդական տուեալներու, 436 (+ 94 Պեղրոս Քերթողի՞) պարկեր շարականներ, որ է ըսել մեր այժմու ունեցածին – 996 պարկեր – կեսէն ավելի, եւ կրնային արտադրը կազմել Շարակնոցի մը»¹⁰: Ուրեմն, եթե այդ Շարակնոցը չկար կամ տարածում չունէր, ապա որտե՞ղ էին ամփոփված այս շարականները: Դրան գումարած, որտե՞ղ էին ամփոփվում VII-VIII դարերի հեղինակների, Մովսես Սյունեցու ժամանակակից

⁹ Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պարմություն (գիրք առաջին), Երկեր, հատ. Գ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1968, էջ 530, ծանոթ. 9:

¹⁰ Նորայր արք. Պողարեան, Ծիսագիտութիւն, Նիւ Եորք, 1990, էջ 31:

Ս. Հովհաննես Օձնեցու և կրտսեր ժամանակակից Ստեփանոս Սյունեցու հոգևոր երգերը:

Ի դեպ, վերջինս Ավագ Օրհնությունների կանոնացում է կատարել, որն ուղիղ Շարակնոցի կազմին ու կառուցվածքին առնչվող փաստ է: Կարո՞ղ էր VII-VIII դարերի որևէ հայ հոգևորական չիմանալ այս ամենի տեղը կամ կարո՞ղ էր այդ ամենը զետեղվել ժամագրքում. ամենևին: Եթե մաս էին ժամագրքի, ապա կարող էին երևալ հենց մեր գրվածքում: Առհասարակ, նման բան ապացուցելու համար, այս հարցերին պատասխանելուց բացի, հսկա փաստական զանգվածի կարիք կունենանք, որ չկա: Ուստի, Ն. Թահմիզյանի տողատակում արած ենթադրությունները դույզն-ինչ չեն մեկնում խնդիրը: Դրա միակ բացատրությունն այն է, որ քննարկվող երկը գրվել է մինչև Բարսեղ Ճոնի կատարած կանոնացումը և խիստ որոշակիորեն՝ ո՛չ Մովսես Սյունեցու, այլ՝ Մովսես Քերթովահոր կողմից, ինչպես վկայված է երկի ճակատին:

VII դարը բացառող ևս մեկ փաստարկ. «Յաղագս կարգացի» հեղինակն իր երկի ավարտին (կամ դրա մեզ հասած հատվածի ավարտին) Առավուտյան ժամերգության մի շարք դրվագների անդրադառնալուց հետո գրում է. *«Եւ ապա՝ զմանկունս եկ(ե)ղ(ե)ցտ՝ յորդորեն համաձայնել ընդ անմարմնական բնութիւնս. յասելն թէ յարեւելից մինչեւ ի մուտս արեւու արհնեցէք զանուն տեառն»*¹¹: Խիստ որոշակիորեն հիշատակվում է ՃԺԲ սաղմոսի առաջին տունը և առանձին կերպով նույնի Գ տան «Յարեւելից մինչև ի մուտս» տողը¹²: Ապա հիշատակելի են նույն սաղմոսի այլ տներ ևս:

Ն. Թահմիզյանն այս սաղմոսն անվանում է «Արևագալի» և առանձնացնում դրա երրորդ տան առկայությունն այստեղ, թեև բնագրում «Արևագալի սաղմոս» հիշատակությունը չկա: Հեղինակը նախ չի նկատում նույն սաղմոսով Մանկունքի արձանագրումն, ինչը շատ կարևոր է հայ հիմներգության զարգացման պատմության տեսանկյունից, ապա՝ վերոհիշյալ տողի վերաբերյալ բավարարվում է դարձյալ տողատակում հետևյալ ծանոթությունը դնելով. *«Սույն սաղմոսի կցորդն էլ (այսինքն Բ տունը՝ «Եղիցի անուն տեառն») գործածության մեջ մտած լինելով Եզր Փառաժնակերպոցու օրոք (հմմտ. Վ. Հացունի, նշվ. աշխ., էջ 197), արևագալի ողջ կանոնի հաստատումը իրոք կապվում է Գյուր Արահեզացու անվանը (հմմտ. Մ. Քեշիշյան, Յուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին, Վիեննա, 1964, էջ 73. նաև՝ Տաշյան, Յուցակ*

¹¹ Երաժշտություն մասին երկու հարյուրամյակից ավելի անց մատենագիտությունէն, էջ 32:

¹² Նույն տեղում:

... (իմա՝ Յուդակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարյանց, Վիեննա, 1895 - Մ. Ն.), էջ 516 և 689)»¹³:

Այսինքն, եթե Արևագալի կարգը Ս. Գյուտ Արահեզացու հաստատածն է, ապա, կարծեք թե, ոչ մի կնճիռ չկա. VII-VIII դարերի հայ հեղինակը բնականորեն կարող էր տեղյակ լինել V դարի երկրորդ կեսին կատարված կանոնական հավելմանը: Սակայն հենց ինքը՝ Ն. Թահմիզյանը, հիշեցնում է Արևագալի սաղմոսի երկրորդ տան և Եզր կաթողիկոսի կատարած կանոնական փոփոխությունների մասին, որոնք չէին կարող արտացոլված չլինել նույն VII-VIII դարերի սահմանագծին ստեղծված երկու: Սակայն դրանք մեզ հետաքրքրող երկուսն էլ չկան, ինչն էլ երկի ստեղծման ժամանակաշրջանը ետ է տանում առնվազն մինչև VII դարի առաջին կես, մինչև Եզր կաթողիկոսի ժամանակները, մանավանդ, որ վկայակոչված աղբյուրներից հ. Վ. Հացունին ժամերգությունների սկզբում «կցորդ» դնելը համարում է VII դարի նորամուծություն ¹⁴ (իր համար ոչ տարօրինակ կերպով այն համարելով հունական ժամագրքի ազդեցություն): Հետևապես, Արևագալի «կցորդի» պակասորդը մեր գրվածքում արդեն իսկ խնդիր է հարուցում: Այսինքն, եթե «Յաղագս կարգացը» գրվել է Մովսես Սյունեցու կողմից (Եզր կաթողիկոսից հետո), ապա այնտեղ հիշյալ Արևագալի սաղմոսը պետք է բերվեր արևագալի «կցորդով» (ժամերգության սկզբնավորությամբ), որպես այլ ժամերգություն՝ Առավոտու ժամի ավարտին: Ն. Թահմիզյանն իր իսկ ակնարկած «կցորդի» պակասը մեզ հետաքրքրող երկուս, կարծեք, չի նկատել:

Այն, որ Արևագալի սաղմոս անունով հիշատակվող ՃԺԲ (112 – րդ) սաղմոսը հենց այս հարցի քննարկման շրջանակներում հեռու գնացող դատողությունների առիթ է տալիս և այլ ամուր փաստարկներ է ապահովում Ն. Թահմիզյանի տեսակետի դեմ, այստեղ շրջանցում ենք՝ թողնելով առանձին առիթի: Սակայն, ասվածն էլ բավարար է նկատելու համար, որ եթե Մովսես Քերթոզահոր անունով պահպանված այս մեկնությունը գրված լիներ VII-VIII դարերի սահմանագծին, այսինքն՝ այդ շրջանում ապրած Մովսես Սյունեցու կողմից, ապա այն պետք է արտացոլեր թե՛ Շարակնոցին, թե՛ ՃԺԲ (112-րդ) սաղմոսին առնչվող և՛ հիմներգական, և՛ ծիսական մի շարք իրողություններ: Դրանց

¹³ Ն. Թահմիզյան, նշվ. աշխ., էջ 88, ծանոթ. 16: Մենք կարող ենք հավելել՝ «Քարոզ Արեագալին գլխի. երգոցն եւ կանոնին. արարեալ Ս. Գիւտայ: Յարեւելից մինչեւ ի մոտս ընդ ամենայն տեղիս...»: *Յուդակ հայերէն ձեռագրաց Չմմտի վանքի մատենադարանին*, հատ. Բ, կազմեցին հ. Ն. Ալիեման եւ հ. Հ. Ոսկեան, Վիեննա, 1971, էջ 187:

¹⁴ Հ. Վ. Հացունի, նշվ. աշխ., էջ 186 – 187: Ժամերգությունների սկզբնավորումների մասին տե՛ս **Մաղաքիա արք. Օրմանեան, Ծիսագիտություն**, Երուսաղեմ, 1977, էջ 5:

բացակայությունը վկայում է, որ VII դարն իսպառ արտացոլված չէ այս երկում, իսկ նախորդ՝ V-VI դարերում ևս Մովսես Քերթողահայր անունով հիշատակվող այլ հեղինակ հնարավոր չէ գտնել: Մյուս կողմից, հենց Արևագալի ծիսական կարգի կանոնացումը կապվում է Գյուտ Ա Արահեզացի կաթողիկոսի անվան հետ, ով Ս. Մովսես Խորենացու աշակերտակիցն ու ժամանակակիցն է: Եթե նկատի ունենանք նաև այն, որ հոդվածի սկզբում հիշատակված Ութձայնի այլ արտահայտությունների էական մասը կապվում է այս երկու հեղինակի համբավավոր ուսուցիչներ Ս. Սահակ Պարթևի և Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան հետ, ապա պարզ կդառնա, որ երկն իսկապես V դարի մեկնողական մտքի արդյունք է, և այլ դարաշրջան տանելու, այլ հեղինակի վերագրելու հիմքեր չկան:

Ամփոփում

«Մովսէսի Քերթողահարն յաղագս կարգաց եկեղեցոյ բացայայտութիւնք» խորագրով երկը որպես ձեռագիր պատառիկ պահպանվել է երկու օրինակով: Իր ոչ մեծ ծավալից անկախ՝ այս գրվածքը հարուստ տեղեկություններ է հաղորդում հայ վաղմիջնադարյան երաժշտական մշակույթի մասին: Այն կարևոր է Ութձայն համակարգի աստվածաշնչյան հայեցակարգի, թվային խորհրդաբանության, Սաղմոսարանի՝ ըստ ութ ձայնեղանակների կիրառման յուրահատուկ ձևի, հիմներգական որոշ միավորների վաղ շրջանի մեկնաբանության և այլնի առումով: Գրվածքը XX դարի ընթացքում ուսումնասիրվել է հայ երաժշտագիտության մեջ և 1972 թ. երաժշտագետ Ն. Թահմիզյանի կողմից վերագրվել է VII-VIII դարերի հեղինակ Մովսես Սյունեցուն: Սակայն երկի վերնագրում հիշատակվող Մովսես Քերթողահայրը հայագիտության մեջ ընդունված կարծիքով Ս. Մովսես Խորենացին է (V դար): Այս հակասությունը լուծելու համար բավարար փաստարկներ կան հենց երկի մեջ, որտեղ Հայ եկեղեցու ծեսին և հայ ծիսական-երգային ժողովածուների պատմությանը, առանձին երգային միավորներին և այլ հանգույցներին առնչվող ձևակերպումները թույլ են տալիս բավարար ճշգրտությամբ վերականգնելու այս գրվածքի ստեղծման ժամանակափուլը:

Բանալի բառեր՝ Ութձայն, Ժամագիրք, Շարակնոց, Գիշերային ժամերգություն, Առավոտյան ժամերգություն, սաղմոս, շարական:

ДАТИРОВАНИЕ ОДНОГО ИЗ ДРЕВНЕЙШИХ ДОКУМЕНТОВ, ОТНОСЯЩИХСЯ К АРМЯНСКОМУ ВОСЬМИГЛАСИЮ

Резюме

Մցր Նավյան (Армения)

кандидат искусствоведения, профессор
заслуженный деятель искусств РА

Ереванская государственная консерватория имени Комитаса
Институт искусств НАН РА

Труд отца армянской историографии Мовсеса Хоренаци (*Կերտոգաхайր*) под заглавием “Толкования Мовсеса Кертогахайра о церковных чинопоследованиях” в виде рукописного фрагмента сохранился в двух копиях. Первая из них дошла до нас как приложение к толкованию Григориса Аршаруни (VII-VIII вв.) об обрядовых чтениях, переписанных в XI веке (данное

толкование находится в хранилище рукописей армянской конгрегации Мхитаристов в Венеции, под номером 475). Второй образец был переписан в XVII веке и хранился в частной коллекции Арутюна Кюрдяна. Несмотря на свой небольшой объем, этот фрагмент содержит богатые сведения о музыкальной культуре раннего Средневековья. Он имеет важное значение для трактовки библейской концепции системы восьмигласия, числовой символики, особого способа употребления Псалтыри согласно восьми гласам, ранних проявлениях некоторых гимнографических жанров и ряда других вопросов. Рассматриваемый фрагмент был исследован в армянском музыковедении XX века и в 1972 г. был приписан Никогосом Тагмизяном автору VII–VIII веков Мовсесу Сюнеци. Однако, по мнению арменоведов *Мовсес Кертотгахайр*, упомянутый в заголовке рукописи - это Св. Мовсес Хоренаци (V век). В рукописном фрагменте есть достаточно аргументов, которые решают данное противоречие. Формулировки, относящиеся к обряду Армянской церкви, истории армянских церковно-певческих сборников, отдельным гимнографическим образцам и другим вопросам позволяют с достаточной точностью восстановить дату создания данной рукописи.

Ключевые слова: Армянское восьмигласие, *Жамагирк* (Часослов), *Шаракноц* (Гимнарий), Вечерня, Заутреня, псалм, *шаракан*.

THE DATING OF ONE OF THE OLDEST DOCUMENTS RELATED TO THE ARMENIAN EIGHT-MODE SYSTEM

ABSTRACT

**Prof. Mher Navoyan (Armenia), PhD in Art
Komitas State Conservatory
Institute of Arts of NAS RA**

The work entitled *Commentary on the Church Orders by Movses Kertoghahayr* in manuscript format has survived in two extant samples. The first one has survived in the codex presenting the Commentary on the Pericopes by Grigor Arsharuni (VII–VIII centuries), copied in the XI century. Today it is kept under no.475 at the Manuscript Repository of the Mekhitarian Congregation of Venice. The second example was recopied in the XVII century; it was belonging to Harutyun Kurdian's private collection. The work discussed here belongs to commentary genre. Despite its small volume, the work provides rich information about early medieval Armenian music. The writing is of significant importance in view of the Biblical concept of the eight-mode system, numerical symbolism, the distinctive use of the psalms in accordance with the eight modes, as well as in view of the interpretation of the certain parts of the early chants and so on. The research on this work in Armenian musicological studies was conducted in the XX century. In 1972, the Armenian musicologist Nikoghos Tahmizyan attributed it to Movses Syunetsi (VII–VIII centuries). However, it is generally accepted in the Armenian studies that Movses Kertoghahayr, mentioned in the title of the work, is considered to be St. Movses Khorenatsi (V century). The piece itself contains enough evidence for resolving this contradiction, as the wording related to the Armenian Liturgy and the history of the collections of Armenian sacred chants, as well as their particular components, along with other key notions allow determining the time period of the creation of this work.

Key words: Armenian Eight-mode, *Zhamagirk* (Book of Hours), *Sharaknots* (Hymnal), Night Office, Morning Office, Psalm, *sharakan*.